ԶՈՒԼԻԵՏԱ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ
Երևանի «Գլաձոր» համալսարանի ընդհանուր տնտեսագիտության ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ՀՀ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 2009–2016 ԹԹ.

Համաշխարհային տնտեսության մեջ վերջին ֆինանսատնտեսական ճգնաժամն ապացուցեց, որ շարունակ խորացող համընդհանրացման պայմաններում երկրների ազգային տնտեսական անվտանգության ապահովումը ժամանակի հրամայականն է: Հետճգնաժամային հասունացած խնդիրներն առավել հրատապ և այժմեական հնչեղություն ստացան հատկապես փոքր տնտեսությամբ երկրներում: ՀՀ տնտեսությունն անմասն չմնաց համաշխարհային զարգացումներից: Մշակվեցին և ներդրվեցին տնտեսության հետճգնաժամային հաղթահարման ուղիներ, հայեցակարգեր, որոնք վերջնարդյունքում միտված են ազգային տնտեսական անվտանգության ապահովմանը: Յուրաքանչյուր երկրի տնտեսական անվտանգությունը ենթադրում է տնտեսության այնպիսի իրավիճակ, որը նպաստում է երկրի սոցիալական, քաղաքական և տնտեսական անհրաժեշտ մակարդակի ապահովմանը և նորամուծությունների զարգացմանը, ինչպես նաև արտաքին ու ներքին հնարավոր սպառնալիքների ազդեցության չեզոքացմանը, երկրի տնտեսական շահերի իրացմանը: Այս համատեքստում կարևորվում են ազգային տնտեսական անվտանգության ապահովմանը միտված թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները, որոնցից, թերևս, ամենաայժմեականը տեխնոլոգիական գործոնն է: ՀՀ տնտեսության ռազմավարական զարգացումների առումով առավել կարևոր է ազգային տնտեսական անվտանգության ապահովման տեխնոլոգիական գործոնը, քանի որ գաղտնիք չէ, որ Հայաստանի միակ ռեսուրսը մարդկային կապիտալն է՝ տեխնոլոգիական շուկայի զարգացումներին միտված իր գործունեությամբ:

Այսօր, փաստ է, որ համաշխարհային տնտեսությունը, նաև ՀՀ տնտեսությունը դեռևս հետճգնաժամային վերականգնումների շրջափուլում են, նկատելի են որոշ դրական արդյունքներ, երկրների մեծ մասում, նաև ՀՀ-ում առկա է տնտեսական աճ,

ընդ որում, թեև դանդաղ, սակայն նոր որակով: Ճգնաժամի դասերից մեկն այն է, որ երկրների տնտեսական աճի ավանդական աղբյուրներն աստիճանաբար իրենց տեղը զիջում են և շարունակելու են զիջել ինտելեկտուալ ակտիվներում կատարվող ներդրումներին: Վերջիններս տեխնոլոգիական զարգացման նախապայմանն են:

Հիմնաբառեր. *ազգային տնտեսական անվտանգության, տեխնոլոգիական գործոն, տեխնոլոգիական շուկա, ինտելեկտուալ ակտիվներ*

JEL: F00, F02

Յուրաքանչյուր երկրի տնտեսական անվտանգությունը ենթադրում է տնտեսության այնպիսի իրավիճակ, որը նպաստում է երկրի սոցիալական, քաղաքական և տնտեսական անհրաժեշտ մակարդակի ապահովմանը և նորամուծությունների զարգացմանը, ինչպես նաև արտաքին և ներքին հնարավոր սպառնալիքների ազդեցությունից երկրի տնտեսական շահերի իրացմանը[1]: Այս համատեքստում կարևորվում են ազգային տնտեսական անվտանգության ապահովմանը միտված թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները, որոնցից, թերևս, ամենաայժմեականը տեխնոլոգիական գործոնն է: Այս տեսանկյունից, ցավոք, դեռևս 21-րդ դարում պահպանվում է զարգացող երկրների՝ տեխնոլոգիաների միջազգային շուկայում[2] հիմնականում որպես սպառողներ հանդես գալու վարքագիծը, թեև, որոշ միջազգային հեղինակավոր կառույցներ[3] հրապարակում են տարեկան զեկույցներ, որտեղ նկատելի է զարգացող երկրների տեխնոլոգիական առաջընթացը[4]: Օրինակ՝ համաձայն «Գլոբալ ինովացիոն ինդեքս–2017» զեկույցի, Կենտրոնական և Հարավային Ասիայում Հնդկաստանը համարվում է առաջատար նորարարական կենտրոն՝ 127 երկրների շարքում զբաղեցնելով 60-րդ հորիզոնականը: Հավելենք, որ նույն զեկույցում Հայաստանը զբաղեցնում է 59-րդ հորիզոնականը, առջևում են՝ Ռուսաստանի Դաշնությունը (45), Ուկրաինան (50), Թուրքիան (43), հաջորդում են՝ Վրաստանը (68), Ղազախստանը (78), Ադրբեջանը (82), Բելառուսը (88), Ղրղզստանը (95):

Այսուհանդերձ, միջազգային տեխնոլոգիական շուկայում շարունակվում է խզումը զարգացած և զարգացող երկրների միջև: Նշյալ իրողությունը բնութագրող տարաբնույթ ցուցանիշների, համաթվերի հաշվարկման մեթոդաբանության մեջ էական դերակատարում ունեն ոչ նյութական ակտիվները, ինչը հիմնականում պայմանավորված է տվյալ երկրում իրականացվող արտոնագրային գործունեությամբ:

Վերոնշյալ համատեքստում փորձենք վերլուծել ՀՀ-ում արտոնագրային՝ արդյունաբերական սեփականության օբյեկտների (գյուտեր, օգտակար մոդելներ, արդյունաբերական նմուշներ, ապրանքային նշաններ) իրավական պահպանության հետ կապված գործունեությունը ներկայացնող ցուցանիշ-

---

[1] Տե՛ս **Զ. Թադևոսյան,** «Ազգային տնտեսական անվտանգություն» եզրույթի որոշ մեկնաբանումների շուրջ, «Այլընտրանք» գիտական հանդես, 2016/2, ապրիլ-հունիս, էջ 146–147:

[2] Տե՛ս **Զ. Թադևոսյան,** Տեխնոլոգիաների միջազգային փոխանակման դերը անցումային տնտեսության կայունացման գործում, մենագրություն, Եր., «Գրական հայրենիք», 2008, էջ 33–34:

[3] Տե՛ս Համաշխարհային բանկ, Արժույթի միջազգային հիմնադրամ, Առևտրի համաշխարհային կազմակերպություն, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն:

[4] Տե՛ս **The Global Innovation Index 2017,** Innovation Feeding the World, TENTH EDITION, Fontainebleau and Geneva, էջ 20–21:

ները և բացահայտել այն սպառնալիքները, որոնք այսօր ծանրակշիռ ազդեցություն ունեն երկրի ռազմավարական խնդիրների լուծման, մասնավորապես՝ ազգային տնտեսական անվտանգության տեխնոլոգիական ապահովման համատեքստում:

ՀՀ ԱՎԾ-ն նշյալ ոլորտին առնչվող վիճակագրությունը հրատարակում է տեղեկատու-զեկույցների, ժողովածուների միջոցով[5]: Ըստ ՀՀ ԱՎԾ հրատարակած տվյալների՝ 1992 թվականից մինչև 2016 թ. դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում գյուտերի և օգտակար մոդելների գծով ստացված հայտերի ընդհանուր քանակը կազմել է 4328, իսկ 1994–2016 թթ. մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն է ուղարկվել գյուտի 89 միջազգային հայտ, ընդ որում, միայն 2016-ին ներկայացվել է գյուտերի 3 միջազգային հայտ[6]:



Գծապատկեր 1. *Ներկայացված գյուտերի և օգտակար նմուշների հայտերի քանակը 2009–2016 թթ. (միավոր)*[7]

Ըստ գծապատկեր 1-ի՝ գյուտերի և օգտակար մոդելների գծով ներկայացված հայտերի ընդհանուր թիվը 2016 թ., 2009-ի համեմատությամբ, նվազել է 42-ով կամ 25%-ով՝ 168-ից հասնելով 126-ի: Հայտերի ընդհանուր քանակում, համեմատվող տարիներին, օգտակար մոդելների հայտերի թիվը նվազել է 9-ով կամ 21.9%-ով, իսկ գյուտերի հայտերի թիվը նվազել է 33-ով կամ 25.9%-ով: Նման տատանումների պատճառներից են ոչ միայն շուկայական պահանջարկի նվազումը, այլև այն, որ օգտակար մոդելները բացառում են նորույթ պարունակող տարրը, հետևաբար՝ դրանք պակաս ծախսատար են, ավելի հասանելի, մինչդեռ գյուտերի գրանցման համար նորույթի բաղադրիչը պարտադիր պահանջ է, ուստիև, տրամաբանորեն, պահանջվող գործընթացների իրականացումն ավելի ծախսատար է:

---

[5] Համապատասխան վիճակագրություն է հրապարակում նաև Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության Մտավոր սեփականության գործակալության www.aipa.am կայքում:

[6] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2016 թվականին և դինամիկ շարքեր (2012–2016), ՀՀ ԱՎԾ վիճակագրական ժողովածու, Եր., 2017, էջ 563:

[7] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2014 թվականին և դինամիկ շարքեր (2009–2014), ՀՀ ԱՎԾ վիճակագրական ժողովածու, Եր., 2015, էջ 513: Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-մարտին, ՀՀ ԱՎԾ, տեղեկատվական ամսական զեկույց, Եր., 2016, էջ 189: Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2016 թվականին և դինամիկ շարքեր (2012–2016), ՀՀ ԱՎԾ վիճակագրական ժողովածու, Եր., 2017, էջ 563:

2009–2016 թթ. գյուտերի և օգտակար մոդելների գծով հայտերի առավելագույն թիվը[8] գրանցվել է 2011-ին՝ 188 հայտ, գյուտերի գծով հայտերի առավելագույն քանակը՝ 2010-ին՝ 142 հայտ, իսկ օգտակար մոդելների դեպքում՝ 2014 թ.-ին՝ 58 հայտ: Հարկ է նշել, որ նշված հայտերի շարքում բարձր տեսակարար կշիռ են ունեցել գյուտերի գծով ներկայացված հայտերը. տարբեր տարիներին ցուցանիշը տատանվել է 67-ից մինչ 76.7%-ի սահմաններում: Իսկ ինչպիսի՞ն է մտավոր սեփականության հայտերի ներկայացման աշխարհագրական ուղղվածությունը:

Համապատասխան վիճակագրության վերլուծությունից[9] երևում է, որ և՛ գյուտերի, և՛ օգտակար մոդելների գծով այլ երկրներ ներկայացված հայտերի քանակը տարեցտարի կրճատվել է: Այսինքն՝ ՀՀ սահմաններից դուրս դրանք պահանջարկ չունեն: Այստեղ, իհարկե, մեկ այլ խնդիր էլ կա. արտոնագրային համակարգը, չնայած վերջին տարիներին էլեկտրոնային եղանակով գրանցման ներդրման շնորհիվ անհամեմատ դյուրինացվել է, այդուհանդերձ, դեռևս ծախսատար է, փորձաքննական եղանակով գյուտերն ու օգտակար մոդելները սակավ են գրանցվում, ինչը թեև աշխատատար է և «թանկ», սակայն առավել ստույգ են արդյունքները և ներկայանալի՝ տարբեր միջազգային շուկաներում: Ինչպես վկայում են ներքոնշյալ վիճակագրական տվյալները, ուսումնասիրվող տարիներին առանձին հայտերի տեսակների դեպքում գերակշիռ մաս են կազմել Հայաստանում ներկայացվածները:



Գծապատկեր 2. *Գյուտերի և օգտակար մոդելների գծով ներկայացված հայտերի տեսակարար բաշխումն ըստ երկրների 2009–2016 թթ. (%)*

[8] Մտավոր սեփականության օբյեկտների շուկայի աշխուժացումը մասամբ բացատրվում է 2010–2012 թթ. ՀՀ տնտեսական աճի ակտիվացմամբ: Տե՛ս http://www.edrc.am

[9] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2016 թվականին և դինամիկ շարքեր (2012–2016), ՀՀ ԱՎԾ վիճակագրական ժողովածու, Եր., 2017, էջ 568:
Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2014 թվականին և դինամիկ շարքեր (2009–2014), ՀՀ ԱՎԾ վիճակագրական ժողովածու, Եր., 2015, էջ 513: Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-մարտին, ՀՀ ԱՎԾ, տեղեկատվական ամսական զեկույց, Եր., 2016, էջ 189:

Ընդհանուր առմամբ, ավելացել է ՀՀ-ում ներկայացված գյուտերի և օգտակար մոդելների գծով հայտերի մասնաբաժինը. 2009-ին կազմել է 93.5%, իսկ 2016-ին՝ 98.4% (գծապատկեր 2): Անշուշտ, հուսադրող է հայկական տեխնոլոգիական շուկայի մասնակիցների, ինչու չէ, նաև օտարերկրացիների, ակտիվությունը, սակայն, միաժամանակ, մտահոգիչ է միջազգային շուկաներում ազգային հայտերի գրեթե քառակի անգամ նվազումը: Այս բացահայտումների շրջանակներում, կարծում ենք, տեխնոլոգիական անվտանգության ապահովման տեսանկյունից առավել ուշադրության է արժանի այն ոլորտների ուսումնասիրությունը, որտեղ նկատելի է տեխնոլոգիական առաջընթացը:

ՀՀ-ում արտոնագրային գործունեության վերաբերյալ հրապարակված տվյալների ուսումնասիրությունից[10] երևում է, որ 2015 թ. մարդու կենսական պահանջների բավարարման ոլորտում գյուտերի և օգտակար մոդելների հայտերի քանակը կազմել է 31, որը, 2014-ի համեմատությամբ, ավելացել է 4-ով, իսկ 2016-ին՝ 35, որը, 2015 թ. համեմատությամբ, ևս ավելացել է 4-ով: 2015–2016 թթ. ավելացել է բժշկության և անասնաբուժության (3-ով) բնագավառի հայտերի թիվը: Սննդամթերքի և ծխախոտի ոլորտում գյուտերի և օգտակար մոդելների հայտերի քանակը նվազել է 1-ով, գյուղատնտեսության բնագավառում՝ 2-ով, իսկ հագուստի և կենցաղային առարկաների վերաբերյալ 2016 թ. ներկայացվել է 5 հայտ:

Տարբեր տեխնոլոգիական գործընթացների և տրանսպորտի բնագավառում 2015 թ., 2014 թ. համեմատությամբ, հայտերի քանակն ավելացել է 5-ով, իսկ 2016 թ., 2015-ի համեմատությամբ, կրճատվել է 21-ով: 2015-ին, 2014-ի համեմատությամբ, հայտերի քանակը նյութերի մշակման գծով պակասել է 1-ով, իսկ 2016-ին, 2015-ի համեմատությամբ՝ 7-ով:

Անօրգանական քիմիայի բնագավառում 2014–2015 թթ. հայտերի թիվն ավելացել է 6-ով, էլեկտրականության ոլորտում՝ 1-ով, այլ բնագավառներում՝ 3-ով, իսկ 2015–2016 թթ. անօրգանական քիմիայի բնագավառում հայտերի թիվը կրճատվել է 4-ով, էլեկտրականության ոլորտում՝ 1-ով, այլ բնագավառներում՝ 23-ով: Մի շարք բնագավառներում կրճատվել է գյուտերի օգտակար մոդելների հայտերի քանակը. շինարարության ոլորտում՝ 3-ով, մեխանիկայի, լուսավորության, ջեռուցման, շարժիչների և պոմպերի բնագավառում՝ 15-ով, ֆիզիկայի (չափումներ և օպտիկա) ոլորտում՝ 11-ով:

Այսուհանդերձ, ինչպիսի՞ն է վերջին տարիներին տեխնիկայի բնագավառում գյուտերի և օգտակար մոդելների հայտերի բաշխման վիճակագրությունը (գծապատկեր 3): Գծապատկերում ներկայացված տվյալներից երևում է, որ ուսումնասիրվող տարիներին ստացված գյուտերի և օգտակար մոդելների վերաբերյալ հայտերի մեծ մասը բաժին է ընկնում այլ բնագավառներին, մարդու կենսական պահանջների բավարարման և տարբեր տեխնոլոգիական գործընթացների, տրանսպորտի ոլորտներին: Ընդհանուր հայտերի մեջ այդ տարիներին հիմնականում ավելացել են մարդու կենսական պահանջների (2014 թ.՝ 14.9%, 2015 թ.՝ 18.2%, 2016 թ.՝ 27.8%), տարբեր տեխնոլո-

[10] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2016 թվականին և դինամիկ շարքեր (2012–2016), ՀՀ ԱՎԾ վիճակագրական ժողովածու, Եր., 2017, էջ 563: Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-մարտին, ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ամսական զեկույց, Եր., 2016, էջ 189: Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2014 թվականին և դինամիկ շարքեր (2009–2014), ՀՀ ԱՎԾ վիճակագրական ժողովածու, Եր., 2015, էջ 509:

գիական գործընթացների, տրանսպորտի (2014 թ.՝ 12.7%, 2015 թ.՝ 16.5%, 2016 թ.՝ 5.6%) և քիմիայի, մետաղագործության (2014 թ.՝ 9.4%, 2015 թ.՝ 12.9%, 2016 թ.՝ 13.5%) բնագավառներին բաժին ընկնող տեսակարար կշիռները: Ի հակադրություն դրան, կրճատվել են շինարարության, լեռնագործության (2014 թ.՝ 8.3%, 2015 թ.՝ 7.1%), մեխանիկայի, լուսավորության, ջեռուցման, շարժիչների, պոմպերի, զենքի և ռազմամթերքի, պայթեցման աշխատանքների (2014 թ.՝ 13.3%, 2015 թ.՝ 5.3%, 2016 թ.՝ 4.0%), ֆիզիկայի (2014 թ.՝ 13.8%, 2015 թ.՝ 8.2%, 2016 թ.՝ 12.7%) բնագավառների մասնաբաժինները: Եթե ամփոփենք, կարելի է արձանագրել, որ երկրի տեխնոլոգիական առաջընթացին աջակցող հայտնագործություններն աստիճանաբար գնալով նվազել են:



Գծապատկեր 3. *Ստացված գյուտերի և օգտակար մոդելների հայտերի տեսակարար բաշխումն ըստ տեխնիկայի բնագավառի 2013–2016 թթ. (%)*

Ավելին, եթե նույնիսկ նկատելի է արտոնագրային գործունեության որոշ առաջընթաց քիմիայի, էլեկտրականության, ֆիզիկայի, տարբեր տեխնոլոգիական գործընթացների և տրանսպորտի բնագավառներում, միևնույն է, միջազգային տեխնոլոգիական շուկաներում ՀՀ մտավոր սեփականության իրավական պահպանության արդյունքները գրեթե պահանջարկ չունեն: Սա լուրջ սպառնալիք է ՀՀ տեխնոլոգիական անվտանգության ապահովման տեսանկյունից, քանի որ երկրի ռազմավարական զարգացումների, առաջընթացի հիմնական ուղին գիտելիքահենք տնտեսության ձևավորումն է տեխնոլոգիաների միջազգային փոխանցման ակտիվացման միջոցով:

Ինչևէ, անդրադառնանք մտավոր սեփականության պահպանության մեկ այլ օբյեկտի՝ արդյունաբերական նմուշների վիճակագրությանը: Քանի որ արդյունաբերական նմուշը ներկայացնում է ապրանքի, իրի գեղարվեստա-կոնստրուկտորական լուծումները, ուստի վերը քննարկված իրողությունների շրջանակներում միանգամայն տրամաբանական են ներքոնշյալ եզրահան-գումները:



Գծապատկեր 4. *Ներկայացված արդյունաբերական նմուշների հայտերի քանակը 2009–2016 թթ. (միավոր)*

Ուսումնասիրվող տարիներին արդյունաբերական նմուշների ներկայաց-ված հայտերի նվազագույն մակարդակ գրանցվել է 2010-ին, իսկ առավելա-գույն մակարդակ՝ 2012-ին: 2016 թ. ներկայացված հայտերը կազմել են 29 միավոր, որը, 2015 թ. համեմատությամբ, կրճատվել է 9-ով:

Ավելորդ չենք համարում նշել, որ արդյունաբերական սեփականության իրավական պահպանության օբյեկտներից ապրանքային նշաններն առավել շարժուն գործիքներ են, նաև առավել եկամտաբեր: Ուստի, անդրադառնանք այն հարցին ևս, թե ուսումնասիրվող ժամանակահատվածում ինչպիսի՞ զար-գացումների շրջանակ են ունեցել ապրանքային նշանները (աղյուսակ 1): Աղյուսակում բերված տվյալներից երևում է, որ, ընդհանուր առմամբ, 2016-ին, 2009-ի համեմատությամբ, գրանցման ներկայացված ապրանքային նշանների հայտերի քանակը նվազել է 1041-ով, սակայն դրանց քանակը, տարբեր երկրների առումով, կրել է տարբեր փոփոխություններ:

Աղյուսակ 1-ում արտացոլված տվյալները փաստում են, որ, նույն թվա-կանների համեմատությամբ, գրանցման ներկայացված ապրանքային նշան-ների հայտերի քանակը Միացյալ Թագավորությունից կրճատվել է 133-ով, Ֆրանսիայից՝ 70-ով, Ուկրաինայից՝ 87-ով, Իտալիայից՝ 3-ով, այլ երկրներից՝ 667-ով: Համեմատվող տարիներին ավելացել է Հայաստանի (146-ով), Ռու-սաստանի Դաշնության (8-ով) կողմից գրանցման ներկայացված ապրանքա-յին նշանների հայտերի քանակը:

Աղյուսակ 1

Գրանցման ներկայացված ապրանքային նշանների հայտերի քանակն ըստ հայտատուների հիմնական երկրների[11]

Երկրներ	2009	2010	2011	2012	2013	2014	2015	2016
Հայաստան	1115	1266	1105	1122	1167	1341	1340	1261
Ռուսաստանի Դաշնություն	315	336	398	599	622	471	477	323
Շվեյցարիա	212	315	191	245	236	240	309	184
Գերմանիա	277	193	207	250	253	233	339	235
Ֆրանսիա	186	170	107	140	160	150	154	116
Միացյալ Թագավորություն	197	181	89	119	99	133	197	64
Հունգարիա	138	79	138	167	167	129	120	26
Իտալիա	136	149	129	211	213	184	131	133
Ուկրաինա	149	164	134	113	105	131	104	62
ԱՄՆ	357	423	389	429	402	456	454	321
Չինաստան	188	238	169	164	172	191	201	181
Այլ երկրներ	1756	1715	1646	1308	1204	1222	1192	1079
Ընդամենը	5026	5229	4702	4867	4820	4847	5044	3985

Գծապատկեր 5-ում ներկայացված ապրանքային նշանների հայտերի տեսակարար բաշխումն է՝ ըստ երկրների:



Գծապատկեր 5. ***Գրանցման ներկայացված ապրանքային նշանների հայտերի տեսակարար բաշխումն ըստ հիմնական երկրների 2009–2016 թթ. (%)***

[11] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2016 թվականին և դինամիկ շարքեր (2012–2016), ՀՀ ԱՎԾ վիճակագրական ժողովածու, Եր., 2017, էջ 568: Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-մարտին, ՀՀ ԱՎԾ, տեղեկատվական ամսական զեկույց, Եր., 2016, էջ 189: Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2014 թվականին և դինամիկ շարքեր (2009–2014), ՀՀ ԱՎԾ վիճակագրական ժողովածու, Եր., 2015, էջ 513–515:

Վերլուծության արդյունքները փաստում են, որ 2009–2015 թթ. գրանցման ներկայացված ապրանքային նշանների հայտերի գերակշիռ մասը բաժին է ընկել Հայաստանին (22.2–31.6%) և այլ երկրների (շուրջ 60) (23.6–34.9%): Մեր ներկայացրած երկրների շարքում 2016-ին հարաբերականորեն բարձր տեսակարար կշիռ են ունեցել Ռուսաստանի Դաշնությունը (8.1%), ԱՄՆ-ն (8.1%), Գերմանիան (5.9%):

Վերոշարադրյալից հանգում ենք այն եզրակացության, որ տեխնոլոգիական շուկայի կարևորագույն ցուցանիշներից են մտավոր սեփականության օբյեկտների գրանցման ներկայացված հայտերը, սակայն ազգային գիտատեխնոլոգիական զարգացման տեսանկյունից ոչ պակաս կարևոր է նաև այն վիճակագրությունը, թե ներկայացված հայտերի ո՞ր մասնաբաժնին են տրվում արտոնագրեր, վկայագրեր կամ պարզապես գրանցվում՝ պետականորեն հաստատելով դրանց գործողության ժամկետները, դրանց դիմաց վճարումները և այլն: ՀՀ ԱՎԾ հրապարակած տվյալների վերլուծությունից[12] կարելի է եզրակացնել, որ 2016 թ., 2009 թ. համեմատությամբ, գյուտերի գծով տրված արտոնագրերը կրճատվել են 63-ով (40.3%-ով), օգտակար մոդելների գծով տրված արտոնագրերն ավելացել են 44-ով (46.7%-ով), գրանցված ապրանքային նշանների գծով՝ 267-ով (20.6%-ով): 2016 թ., 2015-ի համեմատությամբ, արդյունաբերական նմուշների գծով վկայագրերը կրճատվել են 9-ով (28.1%-ով): Ինչ վերաբերում է ՀՀ-ում արտոնագրային գործունեությունից պետական բյուջե կատարված մուտքերի վերլուծությանը, ապա պետք է արձանագրել, որ այստեղ 2009–2016 թթ. նկատելի են աճի միտումներ: 2016-ին, 2009 թ. համեմատությամբ, արտոնագրային գործունեությունից պետական բյուջե կատարված ընդհանուր մուտքերն ավելացել են 229.4 մլն դրամով կամ 74.2%-ով:[13] Գծապատկեր 6-ում արտացոլված տվյալներից երևում է, որ արտոնագրային գործունեությունից ՀՀ պետական բյուջե մուտք արված միջոցների կազմում բարձր տեսակարար կշռով աչքի են ընկնում ապրանքային նշանների և արդյունաբերական նմուշների իրավական պահպանության գծով մուտքերը, որոնք 2009-ին կազմել են 65.8%, իսկ 2016-ին՝ 63.9%: Իրենց մասնաբաժնով զիջում են պետական գրանցամատյանների վարումից ստացված մուտքերը, որոնք 2009-ին կազմել են 22.7%, իսկ 2016-ին՝ 29.0%: Նշված մյուս աղբյուրներից կատարված մուտքերի տեսակարար կշիռները չեն գերազանցել 3%-ը:

---

[12] Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2014 թվականին և դինամիկ շարքեր (2009–2014), ՀՀ ԱՎԾ վիճակագրական ժողովածու, Եր., 2015, էջ 513: Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-մարտին, ՀՀ ԱՎԾ, տեղեկատվական ամսական զեկույց, Եր., 2016, էջ 189: Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2016 թվականին և դինամիկ շարքեր (2012–2016), ՀՀ ԱՎԾ վիճակագրական ժողովածու, Եր., 2017, էջ 568:

[13] Տե՛ս Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-մարտին, ՀՀ ԱՎԾ տեղեկատվական ամսական զեկույց, Եր., 2016, էջ 191: Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2014 թվականին և դինամիկ շարքեր (2009–2014), ՀՀ ԱՎԾ վիճակագրական ժողովածու, Եր., 2015, էջ 515: Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2016 թվականին և դինամիկ շարքեր (2012–2016), ՀՀ ԱՎԾ վիճակագրական ժողովածու, Եր., 2017, էջ 570:



Գծապատկեր 6. *ՀՀ պետական բյուջե մուտքագրված գումարների տեսակարար բաշխումն ըստ արտոնագրային գործունեության առանձին տեսակների 2009–2016 թթ. (%)*

Վերլուծությունների համատեքստում ծագում է մի նոր հարցադրում՝ արդյոք ՀՀ տեխնոլոգիական շուկայի դանդաղ, սակայն հուսադրող զարգացումները նպաստո՞ւմ են երկրի տնտեսական զարգացումներին, ինչպիսի՞ փոխառնչություններ են նկատելի ՀՀ տնտեսության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈՒՆ) և մտավոր սեփականության իրավական պահպանության օբյեկտներից առավել ակտիվ գործիքի՝ ապրանքային նշանների շուկայի զարգացումների միջև[14], որոնք միմյանց չեն բացառում, այլ ընդհակառակը՝ փոխադարձաբար կապված են և լրացնում են իրար: Ավելին, ՀՀ տնտեսության մեջ ներգրավված ՕՈՒՆ-ը և, դրանց զուգահեռ, ակտիվ արտոնագրային գործունեությունն այն խթաններն են, որոնք կարող են երկիրը զերծ պահել գիտատեխնոլոգիական հետընթացից և դրանից բխող սպառնալիքներից:

ՕՈՒՆ-ի, ապրանքային նշանների, գրանցման ներկայացված հայտերի և տրված վկայագրերի փոխկախվածության վերլուծությունը ներկայացնենք տնտեսաչափական մեթոդի գործիքների կիրառմամբ՝ որոշակի օրինաչափություններ և զարգացումներ բացահայտելու և հիմնավորելու նպատակով:

Այդ փոխկապվածության վերլուծության նպատակով որպես արդյունքային հատկանիշ ենք ընտրել գրանցված ապրանքային նշանների քանակը (y_t), իսկ որպես գործոնային հատկանիշ՝ օտարերկրյա ուղղակի ներդրումները (x_{1t}) և գրանցման ներկայացված ապրանքային նշանների հայտերը (x_{2t}) 2009–2016 թթ.:

[14] Տեխնոլոգիաների միջազգային շուկան ենթադրում է առևտրային եղանակով տեխնոլոգիաների միջազգային փոխանցում մտավոր սեփականության իրավական պահպանության օբյեկտների միջոցով՝ արտոնագրեր, ապրանքային նշաններ և այլն: Օտարերկրյա ուղղակի ներդրումները լրացնում են այդ շուկան:

Աղյուսակ 2

ՀՀ-ում ՕՈՒՆ-ի, գրանցման ներկայացված ապրանքային նշանների հայտերը և գրանցված ապրանքային նշանների քանակը 2009–2016 թթ.[15]

Տարիներ	*Օտարերկրյա ուղղակի ներդրումներ (մլն ԱՄՆ դոլար)*	*Ներկայացված ապրանքային նշանների հայտերը (միավոր)*	*Գրանցված ապրանքային նշանների քանակը (միավոր)*
2009	828.7	5026	1297
2010	535.7	5229	1499
2011	703.2	4702	1189
2012	598.4	4867	1388
2013	322.7	4820	1567
2014	289.9	4847	1584
2015	258.8	5044	1488
2016	323.3	3985	1564

Աղյուսակ 2-ում ներկայացված տվյալներից երևում է, որ 2009–2016 թթ. ՀՀ տնտեսության մեջ օտարերկրյա ուղղակի ներդրումներն ունեցել են կրճատման միտումներ: Այս ժամանակահատվածում դրանք, միջին հաշվով, տարեկան կրճատվել են 72.2 մլն ԱՄՆ դոլարով կամ 12.5%-ով:

Նշված երևույթների միջև ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ներկայացված են աղյուսակ 3-ում:

Աղյուսակ 3

ՀՀ-ում ՕՈՒՆ-ի, գրանցման ներկայացված ապրանքային նշանների հայտերի և գրանցված ապրանքային նշանների քանակի փոխկապվածության վերլուծության արդյունքները

Ցուցանիշներ	*Արդյունքներ*
Տնտեսաչափական մոդելի տեսքը	$\hat{y}_t = 55859 - 0.589x_{1t} + 0.204x_{2t}$ $(3.5) \quad (1.23)$
Բազմակի կոռելյացիայի գործակիցը	$R = 0.855$
Բազմակի դետերմինացիայի գործակիցը	$R^2 = 0.731$
Մոդելի նշանակալիության գնահատականը	$F = 7.1$
Զույգային կոռելյացիայի գործակիցները	$r_{yx1} = -0.784$ $r_{yx2} = 0.222$ $r_{x1x2} = -0.102$
$t_{crit} = 2.7$; $F_{crit} = 6.9$	

Աղյուսակ 3-ում ներկայացված զույգային կոռելյացիայի գործակիցները վկայում են, որ ՕՈՒՆ-ի և գրանցված ապրանքային նշանների քանակի միջև կապը ուժեղ է, սակայն՝ հակադարձ ($r_{yx1} = -0.784$), քանի որ ուսումնասիրվող ժամանակահատվածում ՕՈՒՆ-ը ունեցել են կրճատման, իսկ գրանցված

[15] Տե՛ս Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2014, ՀՀ ԱՎԾ, Եր., 2014, էջ 520: Հայաստանի Հանրապետության արտաքին հաշիվներ 2011–2014 թթ., ՀՀ ԱՎԾ վիճակագրական ժողովածու, Եր., 2014, էջ 68: Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2015, ՀՀ ԱՎԾ, Եր., 2015, էջ 532: http://www.mineconomy.am/arm/55/text.html: Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2017, ՀՀ ԱՎԾ, Եր., 2017, էջ 524:

ապրանքային նշանների քանակը՝ աճի միտումներ: ՕՈՒՆ-ի և գրանցման ներկայացված ապրանքային նշանների հայտերի միջև կապը թույլ է և հակադարձ ($r_{x1x2} = -0.102$): Ուղիղ և միջին ուժգնության կապը ձևավորվել է գրանցման ներկայացված ապրանքային նշանների հայտերի և գրանցված ապրանքային նշանների քանակի միջև ($r_{yx2} = 0.222$): Նշված երևույթների միջև կապի դրսևորման օրինաչափությունները արտացոլվել են նաև կառուցված տնտեսաչափական մոդելում: Աղյուսակ 3-ում ամփոփված տվյալներից երևում է, որ նշված երևույթների միջև կառուցված ռեգրեսիոն մոդելը նշանակալի է ($F = 7.1 > F_{crit} = 6.9$), և այդ երևույթների միջև ձևավորվել է բավական ուժեղ կապ ($R = 0.855$): Կառուցված ռեգրեսիոն մոդելի համաձայն՝ 2009–2016 թթ. ՕՈՒՆ-ի՝ յուրաքանչյուր տասն ԱՄՆ մլն դոլարով կրճատմանը զուգահեռ, գրանցված ապրանքային նշաններն ավելացել են 58-ով ($b_1 = -0.589$), իսկ ապրանքային նշանների ներկայացված հայտերի քանակի յուրաքանչյուր տասը միավորի ավելացմանը զուգահեռ, գրանցված ապրանքային նշանների քանակն ավելացել է 2-ով ($b_2 = 0.204$): Վերլուծության արդյունքները փաստում են, որ 2009–2016 թթ. ապրանքային նշանների ներկայացված հայտերի դիմաց գրանցված ապրանքային նշանների քանակի տատանումների շուրջ 73.1%-ը պայմանավորված է ՕՈՒՆ-ի և գրանցման ներկայացված ապրանքային նշանների հայտերի քանակության համատեղ տատանումներով:

Այսպիսով՝ ինչպիսի՞ զարգացումներով են պայմանավորված վերոնշյալ փոխառնչությունները և ի՞նչ դերակատարում ունեն ՀՀ գիտատեխնոլոգիական անվտանգության ապահովման տիրույթում:

Կատարված ուսումնասիրությունների արդյունքում ավելորդ չէ ևս մեկ անգամ փաստելը, որ համաշխարհային տնտեսությունը դեռևս հետճգնաժամային վերականգնումների շրջափուլում է. ակնհայտ են որոշ արդյունքներ, երկրների մեծ մասում նկատելի է տնտեսական աճ, ընդ որում, թեև դանդաղ, սակայն նոր որակով, այն է՝ տնտեսական աճի ավանդական աղբյուրներն աստիճանաբար իրենց տեղը զիջում են ինտելեկտուալ ակտիվներում կատարվող ներդրումներին[16]: Վերջիններս տեխնոլոգիական զարգացման նախապայմանն են: ՀՀ տնտեսությունն անմասն չէ այս զարգացումներից: Սակայն ուսումնասիրվող տարիներին ՀՀ տնտեսության մեջ տեխնոլոգիական առաջընթացն ապահովող հիմնական միջոցները՝ օտարերկրյա ուղղակի ներդրումները, կրճատվեցին ամենատարբեր պատճառներով. մասնավորապես՝ վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի, 90-ականներից շարունակվող ներդրումային միջավայրի գրավչությանը խոչընդոտող հանգամանքների, ՀՀ տնտեսական աճի դանդաղ տեմպերի, բնակչության գնողունակության նվազման, արտագաղթի և այլ պատճառներով: Սակայն Հայաստանը չհայտնվեց ավտարկիայի «հորձանուտում», օտարերկրյա ներդրողները դիմեցին շուկա մուտք գործելու ավելի «անմեղ», պակաս ռիսկային գործիքների՝ ապրանքային նշաններին, որոնք, ինչպես նկատեցինք, միտված են խթանելու ՀՀ տեխնոլոգիական շուկայի զարգացումները և մեղմելու այն սպառնալիքները, որոնք ուրվագծվում են ազգային տնտեսական անվտանգության ապահովման տիրույթում:

[16] Տես՝ http://www.wipo.int/ipstats/fr/statistics/country_profile/profile.jsp?code=AM

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության սոցիալական վիճակը 2014 թվականին և դինամիկ շարքեր (2009–2014), ՀՀ ԱՎԾ վիճակագրական ժողովածու, Եր., 2015:
2. Հայաստանի սոցիալ-տնտեսական վիճակը 2016 թվականի հունվար-մարտին, ՀՀ ԱՎԾ, տեղեկատվական ամսական զեկույց, Եր., 2016:
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2014, ՀՀ ԱՎԾ, Եր., 2014:
4. Հայաստանի Հանրապետության արտաքին հաշիվներ 2011–2014 թթ. ՀՀ ԱՎԾ վիճակագրական ժողովածու, Եր., 2014:
5. Հայաստանի վիճակագրական տարեգիրք – 2015, ՀՀ ԱՎԾ, Եր., 2014:
6. Ջ.Թադևոսյան, «Ազգային տնտեսական անվտանգություն» եզրույթի որոշ մեկնաբանումների շուրջ, «Այլընտրանք» գիտական հանդես, 2016/2, ապրիլ-հունիս:
7. Տեխնոլոգիաների միջազգային փոխանցման դերը անցումային տնտեսության կայունացման գործում, մենագրություն, Եր., «Գրական հայրենիք», 2008:
8. The Global Innovation Index 2017, Innovation Feeding the World, TENTH EDITION, Fontainebleau, and Geneva.
9. http://www.edrc.am
10. http://www.mineconomy.am/arm/55/text.html;
11. http://www.wipo.int/ipstats/fr/statistics/country_profile/profile.jsp?code=AM
12. www.aipa.am

ДЖУЛЬЕТТА ТАДЕВОСЯН
Доцент кафедры общей экономики
Ереванского университета “Гладзор”,
кандидат экономических наук

Анализ технологической безопасности РА 2009–2016 гг.– Последний финансовый и экономический кризис в мировой экономике доказал, что обеспечение национальной экономической безопасности в условиях постоянно углубляющейся глобализации является императивом времени. Посткризисные назревшие проблемы стали более актуальными, особенно в странах с малой экономикой. Экономика РА не осталась безучастной в развитии мировой экономики. Поэтому были отработаны и внедрены концепции и пути преодоления последствий глобального кризиса, которые в итоге способны обеспечить национальную экономическую безопасность. В любой стране безопасность экономики предполагает такую ситуацию, которая способствует реализации экономических интересов страны выгод неависимо от влияния возможных внешних и внутренних угроз, а также обеспечению социального, политического и экономического необходимого уровня и развития инноваций. В этом контексте внешние и внутренние факторы национальной экономической безопасности очень важны, но самым современным является технологический фактор. Технологический фактор национальной экономической безопасности более важен в плане стратегического развития экономики РА, поскольку не секрет, что единственным ресурсом Армении является человеческий капитал, направленный на развитие технологического рынка.

Сегодня можно констатировать факт, что мировая экономика, а также экономика РА находятся в процессе посткризисного восстановления, в большинстве стран есть заметные положительные результаты, а также в РА наметился экономический рост: медленный, но с новым качеством. Одним из уроков кризиса является то, что традиционные источники экономического роста постепенно свое место уступают инвестициям в интеллектуальные активы. Последнее является предпосылкой технологического развития.

Ключевые слова: *национальная экономическая безопасность, технологический фактор, технологический рынок, интеллектуальные активы.*
JEL: F00, F02

JULIETA TADEVOSYAN
Associate Professor at the Chair of Economics
at Yerevan Gladzor University, PhD in Economics

The Analysis of the Technological Security of the RA 2009–2016.– In global economy the last financial and economic crisis proved that providing national economic security in the condition of continually deepening globalization is the peremptory of time. The postcrisis mature problems became

more urgent especially in those countries which had small economy. The RA economy was a part of the development of global economy. Therefore, concepts and ways were processed and invested for overcoming the economic postcrisis problems which were aimed at providing the security of national economy. In any country the security of economy supposes such a situation which promotes the provision of a necessary social, political and economic level and the development of innovations, also the implementation of economic benefits of the country from the influence of possible external and internal threats. In this context the external and internal factors of national economic security are very important but the most important one is the technological factor.

The technological factor of national economic security is more essential in the terms of strategic development of the RA economy, because it's not a secret that the only resource of Armenia is the human capital with its activity aimed at the development of technological market.

Today it's a well-known fact that the global economy and the RA economy as well are in the cycle of postcrisis recovery, there are some noticeable positive results in the most countries and also in the RA there is some economic growth: by the way it's slow but with a new quality. One of the lessons of crisis is that the traditional sources of economic growth are gradually yielding the investments of intellectual assets. The latter is the precondition of technological development.

Key word: *Security of national economy, technological factor, technological market, intellectual assets.*
JEL: F00, F02